այս եւ այն մասը, այս եւ այն գիւղը նոյնպէս կապալով տալիս էին ուրիշներին. եւ այսպէս կապալառութիւնը ձեռքից ձեռք անցնելով, աւելի եւ աւելի թանկանում էր, իսկ շահը դուրս էր գալիս դարձեալ գիւղացու քսակից: Այդ էր պատճառը, որ գիւղացին վճարում էր աւելի հարկ, քան այն գումարը, որ կառավարութիւնից նշանակուած էր նրա գիւղի վրայ, որպէս արքունի տուրք:

Գիւղերի աղաները իրաւունք ունէին դատել գիւղացիներին, ենթարկել նրանց պատիժների եւ տուգանքների, բանտարկել նրանց, վճռել նրանց մէջ ծագած վէճերը, մի խօսքով, վարուել նրանց հետ, որպէս իրանց ամենախոնարհ եւ հնազանդ հպատակների հետ: Եւ այս բոլորի մէջ կառավարող ոգին չէր օրէնքը, իրաւունքը կամ ճշմարտութիւնը, այլ-աղայի կամքը եւ նրա հաճոյքը: Իսկ բարձրագոյն կառավարութիւնը, որքան եւ ցանկանում էր, բայց չունէր այնքան ուժ աղաների, — այսինքն՝ խաների, բեկերի, շահզադաների, մօլլաների, սէիդների, — բռնակալութեանց սահման դնելու:

Ահա՛ այս դրութեան մէջ էին այն ժամանակ՝ Սալմաստայ, Խոյի, Մագուայ, Գունեստանի, Մարանդի, Ուրմիի, Սուլդուզի, Սովուխբուլախի, Դուխարղանու, Մարաղայի, Թաբրիզի, Ղարադաղի, Արդաբիլի — բազմաթիւ գիւղերի բնակիչների վիճակը:

Եւ այսպէս, Պարսկաստանում Ատրպատականի բնակիչների կեանքը, իսկ Տաճկաստանում Տարօնի ու Վասպուրականի բնակիչների կեանքը, ներկայացնում են երկու միմեանց շատ հակառակ պատկերներ: Պարսկաստանի մասում տիրում են պարսիկները, ղզըլբաշ-թուրքերը, իսկ Տաճկաստանի մասում՝ քուրդերը: Պարսիկ աղան, որպէս ֆէօդալական կալոածատէր, սեփականել է հողը, եւ իր կառավարութեան բոլոր խորամանկութեամբ, շարունակ կերպով քամում է գիւղացու ձեռքի վաստակը: Քուրդը յափշտակել է հողը եւ ժամանակաւոր կերպով միայն շահւում է նրանից: Պարսիկը, որպէս կրօնական նախանձով ոգեւորուած ազգ, լի մոլեռանդութեամբ հալածում է այլադաւաններին, չէ համբուրում ուրիշ կրօնքների, եւ ամէն միջոցներ գործ է դնում իր հպատակ ազգերին մտցնել մահմեդական մզկիթը: Քուրդը, բնութեան ազատ որդին, դեռ վարակուած չէ կրօնական նախանձով: Պարսիկը նենգաւոր է, խարդախ է, կեղծաւոր է, նա խայթում է օձի պէս, գետնի վրայ սողալով: Քուրդը վայրենի հերոս է. նա որպէս գազան չէ մեղանչում իր բնութեան դէմ. նա գործում է առանց նենգութեան. նա իր զոհերի վրայ նայում է, որպէս իր կերակուրի վրայ: Պարսիկը, որպէս մշտական երաժշտութիւն, յաջորդաբար ցամաքեցնում է, չորացնում է ամէն կենդանութիւն, մինչեւ անապատ է դարձնում երկիրը: Քուրդը անցնում է կա-